ՎՐԱՍՏԱՆ

ՀԱՏՈՒԿ ԹՈՂԱՐԿՈՒՄ

ՆՅԵՑ ԳԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆՅԵՅԱՐՈՒԹՅՈՒՆ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ ԵՐԵՔՇԱԲԹԻ 24 ՄԱՐՏԻ 2020Թ.

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԲՈԼՆԻՍԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

ՆՈՐ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՏԱՐԱԾՈՒՄՆ ԿԱՆԽԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԲՈԼՆԻՍԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երեկ, մարտի 23-ին ես ստորագրեցի նոր կորոնավիրուսի տարածումն կանխելու նպատակով Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներում իրականացվելիք կարանտինային միջոցառումների մասին կառավարության կարգադրությունը:

Երկրում մարտի 21-ին արտակարգ դրություն հայտարարելուց, իսկ երեկ Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներում ստեղծված համաճարակային բարձր ռիսկի պատճառով, վիրուսի տարածումն առավելագույն կանխելու նպատակով մենք ստիպված ենք դիմել կտրուկ, խիստ միջոցների:

Ներկա դրությամբ Վրաստանում վարակված է 61 անձ, թեպետ երկրի մասշտաբով կարանտիում գտնվում է 3320-ը: Հիշեցնեմ, որ մարտի 21-ին ողջ հանրապետությունում հայտարարվեց արտակարգ դրություն, թեպետ այսօր ունենք բավականին բարդ դեպք: Միայն մի դեպք, երբ Մառնեուլիում հայտնաբերվեց վարակված մի անձնավորություն եւ նրա վարակման աղբյուրը չհաջողվեց բացահայտել: Դա հենց այն դեպքն է, որի մասին մենք արդեն երկար ժամանակ, մի քանի օր է, ինչ խոսում էինք, որի համար պատրաստվում էինք, որ երկրում կսկսվի ներքին փոխանցման փուլը: Այս ամենում ցավալին այն է, որ ինչպես երեւում է մեր համաճարակագետների կանխագծումներից, ներքին փոխանցումն տեղի ունեցավ ծիսակատարության ժամանակ, որին ներկա է եղել մի քանի տասնյակ մարդ, հետեւաբար, բոլորը պետք է հասկանան, որ մեր համաճարակագետների կողմից բացահայտված կոնտակտային 90 անձը դեռեւս ոչինչ չի նշանակում: Իրավիճակը բավականին բարդ է եւ դա հանդիսանում է այն հիմնական մարտահրավերն ու հիմնախնդիրը, որը մենք միշտ անվանում էինք տարածման նոր, ներքին փուլին անցում եւ ինչի համար միշտ փորձում էինք առավելագույնս նախապատրաստվել: Եվ իրականում մենք առավելագույնս պատրաստված ենք: Սակայն, չնայած բոլոր այդ նախապատրաստումների, իրավիճակը բավականին բարդ է եւ այսօր, դրանից ելնելով, Վրաստանի կառավարությունը ստիպված եղավ ընդունել այս որոշումը, ըստ որի Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետները անցնում են կարանտինային խիստ պայմանակարգի:

Ի՞նչ են նախատեսում կարանտինային խիստ սահմանափակումները:

Այսօրվանից սահմանափակվում է Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներ մուտքն ու ելքը: Փակվում են բոլոր օբյեկտները, մատչելի կլինեն միայն պարենամթերքի, դեղորայքի եւ ճգնաժամային ենթակառույցների մյուս օբյեկտները: Հասարակական տրանսպորտի երթեւեկությունը կսահմանափակվի: Մունիցիպալիտետների տարածքի ներսում սահմանափակվում է տեղաշարժը, բացառությամբ այն դեպքերի, երբ բնակիչները տեղաշարժվում են պարենամթերքի կամ դեղորայքի ձեռքբերման կամ բժշկական սպասարկում ստանալու համար: Մենք թույլ տվեցինք նաեւ մի բացառություն եւ այն դեպքերում, երբ կունենանք բժիշկների կողմից հստակորեն ձեւակերպված արձանագրության համապատասխան հնարավորություն, Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների բնակիչներին թույլ կտանք գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու հնարավորություն:

Մունիցիպալիտետների տարածքում հասարակական կարգուկանոնի պահպանությունն եւ արտակարգ դրության կիրարկումը ապահովելու է ներքին գործերի նախարարությունը: Դա ներքին գործերի նախարարության լրիվ իրավասությունն է:

Մառնեուլիի քաղաքային «Ջեո հոսպիտալ» կլինիկան, որտեղ գտնվում էր կորոնավիրուսով վարակված հիվանդը, արդեն անցել է կարանտինային աշխատակարգի:

Այդ կլինիկան, ներկա դրությամբ, լրիվությամբ անցել է կարանտինային աշխատակարգի: Այդտեղ, կլինիկայի մոտակայքում, կլինիկայի տարածքում տեղակայվեց դաշտային հոսպիտալ, իսկ երկրորդ կլինիկան՝ «Ավերսի կլինիկան» Մառնեուլիի մունիցիպալիտետում կշարունակի իր գործառույթները, որպես բազմաֆունկցիոնալ բժշկական հաստատություն:

Համոզված եղեք, որ կառավարությունը հնարավոր ամեն ինչ կանի, որպեսզի Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների տարածքում նոր վարակումների փոխանցումների մասշտաբը եւ արագությունը հասցվի նվազագույնի: Կառավարության իրականացրած քայլերի արդյունավետությունը կախված է ոչ միայն այն միջոցառումներից, որոնք իրականացված են, այլեւ երկրի քաղաքացիների հետ համագործակցությունից, նրանց բարի կամքից եւ քաղաքացիական ինքնագիտակցությունից:

Մենք հնարավոր առավելագույնը կանենք, որ հոգանք Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներում մեր յուրաքանչյուր քաղաքացու համար: Բոլորս քաջ հասկանում ենք, որ դա պարտադիր, ստիպողական քայլեր են եւ այդ քայլերի հիմնական պատճառն ու նպատակը յուրաքանչյուր մեր քաղաքացու առողջությունն է:

Մունիցիպալիտետների հետ լրիվ համակարգումն կապահովի տարածաշրջանային զարգացման հարցերով իմ խորհրդական Սոզար Սուբարին:

Վարչապետի աշխատակազմի եւ կառավարության անունից այդ ուղղության հսկիչի դերը վերապահվում է Սոզար Սուբարիին, որը նաեւ կկատարի համակարգողի գործառույթները:

Մարտի 23-ից մունիցիպալիտետներն եւ առողջապահության մարմինները սկսել են փաստացի, այդ երկու մունիցիպալիտետներում դռնեդուռ շրջայցերը, որպեսզի յուրաքանչյուր ընտանիքում հայտնաբերեն հնարավոր ռիսկեր պարունակող,

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՇՏԵՑՄԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎԱՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՔԵԹԵՎԱՆ ՑԻԽԵԼԱՇՎԻԼՈՒ ԴԻՄՈՒՄԸ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԲՈԼՆԻՍԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

- Թանկագին համաքաղաքացիներ, Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների բնակիչներ, ցանկանում եմ իմ աջակցությունը հայտնել ձեզ եւ դիմել խնդրանքով, ցուցաբերեք առավելագույն ուշադրություն եւ կատարեք կորոնավիրուսի կանխման ու ինքնամեկուսացման պայմանների մասին ներկայացված հանձնարարականներն ու պահանջները, նաեւ պահպանեք կարանտինի շրջանակներում սահմանված սահմանափակումները, որոնց կատարումը մեզանից յուրաքանչյուրի պարտականությունն է մեր ընտանիքների եւ մերձավորների, հասարակության եւ երկրի առջեւ:

Մենք միասին ենք այս դժվարագույն պահին եւ հավատում եմ, որ մեր քաղաքացիական բարձր պատասխանատվությամբ, աջակցությամբ եւ փոխօգնությամբ կհաղթահարենք այս մարտահրավերը:

Հայտնեմ նաեւ, որ հանձնարարականների վերաբերյալ լրիվ տեղեկատվությունը մատչելի է կառավարության կողմից հատուկ ձեւավորված **www.StopCoV.ge** կայք էջում, պետական նախարարի աշխատակազմի **www.smr.gov.ge** կայք էջում եւ հատուկ ցանցերի միջոցով, գործում է 112 տեղեկատվական ծառայության թեժ գիծը, նաեւ կրկին ներկայացնում ենք տպագիր տեղեկատվական նյութեր:

Մաղթում եմ առողջություն:

ՎՐԱՍՏԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏ ԳԻՈՐԳԻ ԳԱԽԱՐԻԱՅԻ ԴԻՄՈՒՄԸ ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԲՈԼՆԻՍԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

բարձր ջերմություն ունեցող անձանց, որպեսզի նպաստեն, հնարավորինս արագ հայտնաբերելու հնարավոր վարակման դեպքերը՝ արագ արձագանքման ու բուժման համար, նաեւ, ինչպես այդ մարդկանց հանձնարարվել է, արձագանքեն մունիցիպալիտետներում բնակվող ընտանիքների ցանկացած խնդրանքին, լինի դա կապված պարենամթերքի, բժշկական կամ այլնի հետ:

Մարտի 23-ից տեղական իշխանությունը, մունիցիպալիտետներն եւ առողջապահությանք մարմինները, նաեւ բոլոր այն մարդիկ, ում պատասխանատվության գոտում են Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների բնակիչների, մեր քաղաքացիների բարեկարգ եւ այս մարտահրավերի արդյունավետ հաղթահարման պարտավորությունը, հնարավոր ամեն ինչ կանեն, որպեսզի մենք բոլորս միասին, առաջին հերթին, մեր քաղաքացիները, առավելագույնս դյուրությամբ ու արագ անցնենք եւ հաղթահարենք այդ մարտահրավերը:

Մենք արդեն մի քանի օր է խոսում ենք ու փորձում զգուշացնել մեր յուրաքանչյուր քաղաքացուն, որ երբ խոսում ենք ներքին փոխանցման մասին, խոսում ենք պետական այն սահմանափակ ռեսուրսի՝ վարակման աղբյուրի անմիջական, արագ հայտնաբերման մասին: Այդ հարցում առանձնակի նշանակալի է մեր քաղաքացիների ինքնագիտակցումը, քաղաքացիական պատասխանատվությունն եւ երբ գնում ենք որոշակի մարդաշատ վայրեր, դա չի նշանակում, որ մենք բոլորից համարձակն եւ հերոսներ ենք: Դա նշանակում է, որ մենք ուղղակի չենք հարգում այն մարդկանց, ովքեր մեր կողքին են: Դա նշանակում է, որ մենք չենք հարգում մեր ծնողներին եւ ընտանիքի անդամներին: Ցանկանում եմ մեր յուրաքանչյուր քաղաքացու կոչ անել, որ մեր քայլերն այսօր չեն նշանակում պատասխանատվություն մեր առողջության եւ կյանքի հանդեպ: Դա նշանակում է պատասխանատվություն մեր կողքին կանգնած մեր ընտանիքի անդամի, հարեւանի, մեր համաքաղաքացու, գործընկերոջ եւ, ի վերջո, երկրի առողջության եւ ապագայի առջեւ:

ՄԱՌՆԵՈՒԼԻԻ ԵՎ ԲՈԼՆԻՍԻԻ ՄՈՒՆԻՑԻՊԱԼԻՏԵՏՆԵՐՈՒՄ ԱՐՏԱԿԱՐԳ ԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԱՆՏԻՆԱՅԻՆ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

Սահմանափակվում են.

Մունիցիցիպալիտետների տարածք մուտքն ու ելքը:

Տեղափոխությունները, բացի պարենամթերքի եւ դեղորայքի ձեռքբերման, բժշկական սպասարկումների ստացման համար:

Հասարակական տրանսպորտի երթեւեկությունը, եթե դրա վրա չի տարածվում արտակարգ դրության ժամանակ գործունեությունը դադարեցնելու պահանջը: (ներկա փուլում արգելված է միջքաղաքային տրանսպորտի երթեւեկությունը):

Փակվում են բոլոր օբյեկտները, բացի պարենամթերքի, դեղորայքի եւ ճգնաժամային ենթակառույցների այլ օբյեկտների:

Արգելվում է հասարակական վայրերում ֆիզիկական 10 անձից ավելի մարդկանց հավաքը: Խոսքը վերաբերում է ինչպես փակ, այնպես էլ բացօթյա հասարակական վայրերին, եթե դրանք չեն ներկայացնում մասնավոր անձի բնակության համար հատկացված տարածքներ:

Արգելվում է այն սոցիալական միջոցառումների անցկացումը, որոնք նախատեսում է 10 եւ ավելի ֆիզնկական անձանց հավաք (օրինակ, հարսանիք, հոգեհաց եւ այլն):

10 եւ ավելի ֆիզիկական անձանց հավաքին, լինի դա մասնավոր հաստատությունում (խանութ, դեղատուն եւ այլն), որոնց վրա չի տարածվում արտակարգ դրության ժամանակ գործունեությունը դադարեցնելու պահանջը, հաշվի առնելով օբյեկտի տարածքային չափերը, պահպանել միմյանց միջեւ առնվազն 2 մետր հեռավորություն:

Անձնակազմը, որը իրականացնում է պարենամթերքով ապահովումն եւ մատակարարումը, պետք է հանդերձավորված լինի դիմակով եւ ձեռնոցներով:

Գյուղատնտեսական աշխատանքները կիրականացվեն առողջապահության նախարարության արձանագրության համապատասխան:

Հասարակական կարգուկանոնի պահպանումը ապահովում է ներքին գործերի նախարարությունը:

Բժիշկները կստուգեն ձեր առողջական վիճակն եւ կարիքները:

www.StopCov.ge

ՊԱՏԱՍԽԱՆ՝ ՀԱՃԱԽ ՏՐՎՈՂ ՀԱՐՑԵՐԻՆ

Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներն անցնում են խիստ կարանտինային պայմանակարգի

1. Կարո՞ղ եմ մուտք գործել Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների տարածք:

Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների տարածք կարող են մուտք գործել միայն այդ մունիցիպալիտետներում պաշտոնապես գրանցված Վրաստանի քաղաքացիները: Միաժամանակ, հարկ է նշել, որ այդ դեպքում կարանտինի գործողության ժամկետում մունիցիպալիտետից նրանց դուրս գալու իրավունքը սահմանափակվում է:

2. Կարո՞ղ եմ դուրս գալ Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներից:

Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներից դուրս գալն թույլատրելի է միայն նրանց համար, ովքեր գրանցված չեն այդ մունիցիպալիտետներում եւ այդ դեպքում նրանք անցնելու են 14 օրյա պարտադիր կարանտին:

3. Կարո՞ղ եմ Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների տարածքում օգտվել հասարակական տրանսպորտից:

Ոչ, հասարակական տրանսպորտի երթեւեկությունը սահմանափակվում է:

4. Սեփական ավտոմեքենայով երթեւեկությունը թույլատրե՞լի է:

Միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում (պարենամթերք եւ դեղորայք գնելու ու բժշկական սպասարկումներից օգտվելու համար) եւ միայն մունիցիպալիտետի տարածքում:

5. Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների տարածքում գյուղատնտեսական աշխատանքների իրականացումը սահմանափակվո՞ւմ է:

Գյուղատնտեսական աշխատանքները կիրականացվեն առողջապահության նախարարության արձանագրության համաձայն:

6, Ի՞նչ է նախատեսում առողջապահության նախարարության արձանագրությունը:

Վերոնշյալ հարցով պետք է դիմեք մունիցիպալիտետի տեղական իշխանության ներկայացուցիչներին:

7. Ինչպե՞ս են վարվելու այն մարդիկ, ովքեր այլ շրջաններից հյուր են եկել Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներ:

Նրանք ունեն գործելու երկու տարբերակ. 1. Կարանտինի ժամանակահատվածում մնալ մունիցիպալիտետում եւ 2. թողնեն մունիցիպալիտետի տարածքը, բայց այդ դեպքում նրանք անցնելու են 14 օրյա պարտադիր կարանտին:

8. Թույլատրելի է, արդյո՞ք, հյուր եկած մարդկանց հագուստ, դեղորայք կամ անհրաժեշտ այլ իրերի փոխանցումը:

Մունիցիպալիտետներում հյուր եկած մարդիկ պետք է դիմեն տեղական իշխանության ներկայացուցիչներին, ովքեր նրանց կօգնեն կարիքների ու կենցաղային պայմանների կարգավորման հարցում, միաժամանակ ոչ տեղացի քաղաքացիները կարող են թողնել մունիցիպալիտետների տարածքը՝ նկատի առնելով 14 օրվա պարտադիր կարանտինի անցումը:

9. Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետներում ո՞ր օբյեկտներն են փակվել:

Փակվել են բոլոր օբյեկտները, բացի պարենամթերքի, դեղորայքի եւ ճգնաժամային ենթակառույցային օբյեկտների:

10. Որո՞նք են ճգնաժամային ենթակառույցային օբյեկտները:

Հիվանվանոցը, հրշեջ/փրկարար ծառայությունը, բժշկական շտապ օգնության կենտրոնները, բենզալցման կայանները, բանկոմատներն եւ այլն:

11. Երեխաս Բոլնիսիումն է, կարո՞ղ եմ Մառնեուլիից մեկնել Բոլնիսի:

Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների միջեւ երթեւեկությունը արգելված է:

12. Դիալիզով հիվանդին Մառնեուլիից/Բոլնիսիից կարո՞ղ է եմ տեղափոխել Թբիլիսի:

Մառնեուլիում գործում է բազմաֆունկցիոնալ բժշկական հաստատություն՝ Ավերսիի կլինիկան: Միաժամանակ, անհետաձգելի բժշկական սպասարկումների անհրաժեշտության դեպքում, որոնք հնարավոր չէ ստանալ մունիցիպալիտետի տարածքում, պետք է դիմեք տեղական իշխանության ներկայացուցիչներին:

13. Եթե անձն գրանցված է Բոլնիսիի կամ Մառնեուլիի մունիցիպալիտետում, կարո՞ղ է մուտք գործել (Թբիլիսիից կամ այլ, ցանկացած քաղաքից):

Մառնեուլիի եւ Բոլնիսիի մունիցիպալիտետների տարածք մուտք գործել կարող են միայն այդ մունիցիպալիտետներում պաշտոնապես գրանցված Վրաստանի քաղաքացիները: Միաժամանակ հարկ է նշել, որ այդ դեպքում կարանտին գործողության ժամկետում մունիցիպալիտետից նրանց դուրս գալու իրավունքը սահմանափակվում է:

Բոլնիսիի մունիցիպալիտետ. 599 859 867

Մառնեուլիի մունիցիպալիտետի քաղաքապետարան (0357) 22 33 21, (0357) 22 43 54

Խմբագիր՝ ՎԱՆ ԲԱՅԲՈՒՐԹՅԱՆ

Մեր հասցեն՝ Թբիլիսի 0105
Գ.Աքոնելի փ. 5 Հեռ. 2990-739, 2990-774
www.vrastan.ge
E-mail: vrastan.press@gmail.com

Գրանցման վկայական
№ 4 4 - 1439
«ԿՈԼՈՐ» հրատարակչություն

"ВРАСТАН"
Тбилиси, Грузия
<VRASTAN>
Georgia, Tbilisi
Индекс 66445